Երևանի պետական համալսարանում գործող
Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ)
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին,
հասցե՝ ՀՀ 0025, Ալեք Մանուկյան փողոց 1

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՆՈՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

ԺԲ.00.03 – Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված Դավիթ Արմենի Օհանյանի <<Քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման արդի հիմնախնդիրները>> թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսությունը նվիրված է պայմանագրային իրավունքի կարևորագույն ինստիտուտներից՝ պայմանագրի մեկնաբանմանը, որը ոչ այդքան խորն է ուսումնասիրված հայրենական իրավունքի կողմից: Այս ինստիտուտը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածում, այն է՝ <<*Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով*>>: Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս փոքրիկ իրավակարգավորումը մի գուցե պայմանագրային իրավահարաբերությունները

կարագավորող նորմերի բազմազանության շատ փոքր մասը լինելով որևէ հիմնախնդիր չի առաջադրում իր հստակության և պարզության պաճառով: Սակայն, դա ընդամենը առաջին հայացքից: Վերոնշյալ իրավակարգավորման ակունքներում թաքնված են բազում նախադրյալներ, սկզբունքներ, տեսություններ և մոտեցումներ, որոնք կանխորոշում են պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի ողջ իրավական գործիքակազմը: Ակնհայտ է, որ ինստիտուտի շուրջ ձևավորված գիտական պոտենցիալը և իրավական նորմերի սակավությունը էականորեն բարդ խնդրի առաջ են կանգնեցնում ատենախոսին, քանի որ կյանքում պայմանագրի տարակերպ մեկնաբանությունը բազմաթիվ խնդիրներ է առաջ բերում: Սակայն պետք է ընդգծել, որ ատենախոսին հաջողվել է լուծել իր առջև դրված այդ խնդիրը:

Պայմանագրային հարաբերություններն օրեցօր զարգանում են, առաջանում են նոր տեսակի պայմանագրային հարաբերություններ: Որոշ պայմանագրային հարաբերություններ գնում են դեպի տոտալ ստանդարտացման, իսկ որոշները, ընդհակառակը, ավելի են բարդացվում: Եվ իհարկե այս ամենի վրա չի կարող իր ազդեցությունը չունենալ համացանցը: Պայմանագրային հարաբերությունների այս բազմազանությունը բնականաբար բերում է տարատեսակ պայմանագրային վեճերի, որոնց լուծման ամենագործուն ինստիտուտներից մեկը պայմանագրի մեկնաբանումն է: Այս տեսանկյունից ատենախոսական աշխատանքը մեծ ներդրում կարող է ունենալ հայրենական օրենսդրության զարգացման և ներպետական պրակտիկայի ձևավորման ուղղությամբ, ինչով էլ պայմանավորված է ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը և արդիականությունը:

Ատենախոսը գիտական հետազոտության նպատակ է սահմանել քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման գիտականորեն հիմնավորված ընդհանուր մոտեցման ձևավորումը, որին հետևել է այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ խնդիրների առաջադրումը: Առաջադրված խնդիրների գիտական լուծման միջոցով ատենախոսին, ըստ էության, հաջողվել է

հասնել սահմանված նպատակին, ինչի մասին է վկայում արված գիտական եզրահանգումների և օրենսդրական բնույթի առաջարկությունների առատությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ինը պարագրաֆներից, եզրակացությունից, ինչպես օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության մանրամասն ուսումնասիրությունը վկայում է, որ հեղինակը կատարել է թեմային նվիրված համընդգրկուն և ավարտուն աշխատանք՝ օգտագործելով ընդհանուր գիտական մեթոդներ, մասնավորապես, պատմական-իրավական, ձևական-իրավական, համեմատական-իրավական, անալիզի, սինթեզի և այլ գիտական մեթոդներ: Հեղինակի կողմից ներկայացված նկատառումներն ու դիտարկումներն արժեքավոր են, և միանշանակ, կարելի է փաստել, որ հեղինակը կարողացել է ներկայացնել գիտական պատշաճ մակարդակ ունեցող աշխատանք:

Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով 7 գիտական հոդվածներում, ինչպես նաև սեղմագրում: Ատենախոսության և սեղմագրի ծավալն ու ձևավորումը համապատասխանում են ԲՈԿ-ի կողմից սահմանված կանոններին:

Միևնույն ժամանակ, ներկայացված աշխատանքի վերաբերյալ որոշակի դիտարկումներ ունենք, որոնք հանգում են հետևյալին.

1. Հեղինակն ատենախոսության 27-րդ էջում առաջարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսել հետևյալ կարգավորումը՝ պայմանագրի մեկնաբանման ժամանակ լեզվաբանական փորձաքննությունների իրականացումն արգելվում է:

Մեր կարծիքով առաջարկվող կարգավորումը նախ նյութական նորմ չէ և չի կարող տեղ գտնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Բացի այդ, հստակ չէ, եթե արգելվում է փորձաքննությունների իրականացումը, կարո՞ղ է արդյոք դատավարությանը մասնագետ ներգրավվել և դատարանն այդ կերպ ստանա որոշակի եզրույթի, բառի, արտահայտության լեզվաբանական մեկնաբանությունը: Եվ երրորդ, ավանդաբար արգելվում է միայն իրավաբանական հարցերով

փորձաքննության նշանակումը: Մեր կարծիքով, լեզվաբանությունը նույնպես գիտություն է, և այս ոլորտի մասնագիտական հատուկ գիտելիքները նույնպես կարող են կարևոր լինեն վեճի լուծման համար, եթե նույնիսկ ընդունելի համարենք բառացի մեկնաբանության և լեզվաբանական մեկնաբանության տարբերությունների վերաբերյալ արված դատողությունները:

2. Աշխատանքում մի քանի անգամ (էջ 46, էջ 55) հեղինակը դատարանների կողմից տառացի մեկնաբանությանը նախապատվության տալը պայմանավորում է կիրառման հեշտությամբ: Մեր կարծիքով պատճառը բոլորովին այլ է: Պայմանագրերում հանդիպում են բազմիմաստ բառեր, որոնց մեկնաբանությունն ամենևին դյուրին գործ չէ: Բացի այդ, չնայած Վճռաբեկ դատարանի 2014 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԱՆԴ/0976/02/13 գործով արտահայտված իրավական դիրքորոշմանը, այնուամենայնիվ օրենքը ուղենիշային է համարում հենց տառացի մեկնաբանությունը: Ավելորդ չէ նշել նաև, որ տառացի մեկնաբանության պարագայում որոշակիության ապահովման հավանականությունը մեր իրավական մշակույթի և իրավագիտակցության պարագայում առավել բարձր է, նման մեկնաբանությունը՝ ավելի հուսալի:

3. Կողմերի կամքի պարզման, բանական անձի կոնցեպցիան քննարկելիս հեղինակը չի անդրադարձել համապատասխան պայմանը մեկնաբանելիս տվյալ իրավական համակարգում առկա գործարար շրջանառության սովորույթներին՝ որպես պայմանագրերի մեկնաբանման վրա ազդեցություն ունեցող գործոնի: Մասնավորապես, ռեստորանների օրինակի նմանությամբ, չի քննարկել օրինակ այն իրավիճակը, թե ճաշացանկում առկա գներից բացի արդյոք ռեստորանի կողմից սպասարկման վճարը չի ներառվում գնի մեջ, թե այն, գործարար շրջանառության

սովորույթի համաձայն, կարող է ինքնուրույն գանձվել, և նման պայմանագրերը մեկնաբանելիս դա կարող է էական նշանակություն ունենալ գինը որոշելիս:

Գործարար շրջանառության սովորույթների դերին և նշանակությանը անդրադառնալը պայմանագիրը մեկնաբանելու հիմնախնդիրները քննարկելիս մեր կարծիքով կարող էր ավելի համապարփակ դարձնել գիտական հետազոտությունը:

Այս ամենով հանդերձ պետք է նշել, որ ներկայացված նկատառումները չեն արժեզրկում կատարված աշխատանքը և ընդհանուր առմամբ ատենախոսությունը պետք է հաջողված համարել:

Դավիթ Օհանյանի ատենախոսությունը բնութագրվում է ներքին ամբողջականությամբ, հանդիսանում է արդիական, տեսական և հատկապես գործնական առումով՝ արժեքավոր: Այն շարադրված է գրագետ հայերենով, գիտական լեզվով, աչքի է ընկնում ինքնուրույն ձևակերպումների և սեփական դատողությունների առատությամբ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Դավիթ Արմենի Օհանյանի <<Քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման արդի հիմնախնդիրները>> թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն:

Ընդդիմախոսության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.03 <<Մասնավոր իրավունք>> մասնագիտությանը (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք), բավարարում է ՀՀ Կառավարության 1997թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված <<ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի>> 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է <<Իրավաբանական գիտությունների թեկնածու>> գիտական աստիճանի շնորհման:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԹԵԿՆԱԾՈՒ Ն.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

08.11.2021թ.

<<Ն. Կարապետյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ>>

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ,

ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Հ. ԽԱՉԻԿՅԱՆ